ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 01/24

12.01.2024թ. ք. Երևան

Դավիթ Փոլադյանի անհատական դիմումի հիման վրա՝ 01.07.1998թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի առնչությամբ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիվ ԵԱՆԴ/1508/0210 քաղաքացիական գործի քննության ընթացքում՝ 20.12.2011թ. տեղի ունեցած դատական նիստի ժամանակ Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի կողմից սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ քննվել է թիվ ԵԴ/0382/01/20 քրեական գործը:

Թիվ ԵԱՆԴ/1508/0210 քաղաքացիական գործով դատարանը, հիմք ընդունելով Անդրանիկ Այվազյանի սուտ ցուցմունքը, 25.04.2012թ. վճռով Դավիթ Փոլադյանի ավելի քան 300.000 ԱՄՆ դոլարի (տոկոսներով) հայցով գործի վարույթը կարճել է, իսկ Անդրանիկ Այվազյանի հակընդդեմ հայցը բավարարել և վճռել է Դավիթ Փոլադյանից հօգուտ Անդրանիկ Այվազյանի բռնագանձել 440.549 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև տոկոսներ:

Անդրանիկ Այվազյանը թիվ ԵԱՆԴ/1508/0210 քաղաքացիական գործով իր կողմից տրված սուտ ցուցմունքի հիման վրա 25.04.2012թ. կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա Դավիթ Փոլադյանին սնանկ ճանաչելու հայցով դիմել է դատարան:

Դավիթ Փոլադյանը դատարանի 07.03.2014թ. վճռով ճանաչվել է սնանկ:

Սնանկության գործը շարունակվում է մինչ օրս:

16.06.2022թ. որոշմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել է:

Որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը 26.09.2022թ. որոշմամբ մերժվել է:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի 07.03.2023թ. որոշմամբ մերժվել է:

2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ

01.07.1998թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է

կարճման, եթե՝

...

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական եւ արդյունավետ» (*Bellet-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 38*): Որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է «ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին» (նույն տեղում, § 36,)

Բացի այդ, դատարան դիմելու հնարավորությունը կանխող կամ սահմանափակող դատավարական արգելքների առնչությամբ ՄԻԵԴ դիրքորոշումը հանգում է նրան, որ ներպետական դատարանների կողմից դատավարական կանոնի առանձնահատուկ խիստ մեկնաբանությունը (անհարկի ձևականություններ) կարող է դիմումատուներին զրկել դատարանի մատչելիության իրավունքից (*Pérez de Rada Cavanilles-ն ընդդեմ Իսպանիայի*, § 49):

Եթե դատարանի մատչելիության իրավունքն օրենքով կամ գործնականում սահմանափակված է, ապա ՄԻԵԴ-ն ուսումնասիրում է, թե արդյոք այդ սահմանափակումն ազդում է իրավունքի էության վրա և, մասնավորապես, թե արդյոք այն հետապնդում է իրավաչափ նպատակ և թե արդյոք գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև կա համաչափության ողջամիտ հարաբերություն (*Ashingdane-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 57):

Ավելին, դատարանի իրավունքը ներառում է ոչ միայն վարույթ հարուցելու իրավունքը, այլեւ դատարանի կողմից վեճի լուծում ստանալու իրավունքը (*Kutić-ն ընդդեմ Խորվաթիայի*, § 25):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ

սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.

Գործի քննության շրջանակներում դատարանների ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպման վերաբերյալ արտահայտել են այն դիրքորոշումը, որ *դրա կիրառման համար վարույթի շարունակությունը պետք է անհրաժեշտ լինի որևէ անձի նկատմամբ քննված գործի վերսկսման համար, այնինչ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական ընթացակարգերով իրականացվող վարույթները որևէ անձի նկատմամբ իրականացվող վարույթներ չեն*:

Ներպետական դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ նորմի նման նեղ մեկնաբանությունը հանգեցրել է նրան, որ սույն գործով դիմումատուն քրեական գործի քննության ընթացքում քաղաքացիական գործով ենթադրյալ սուտ ցուցմունք տված անձի մահվան հիմքով զրկվել է մեղադրական դատավճռի կայացման հնարավորությունից: Արդյունքում իրատեսական կլիներ արդեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումների շրջանակներում նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը: Ունենալով ողջամիտ ակնկալիք և հետապնդելով միանգամայն իրավաչափ շահ՝ դիմումատուն զրկվել է մեղադրական դատավճռի հասնելու հնարավորությունից, ինչի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Հատկանշական է նաև, որ մեղադրյալի մահից հետո քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դատարանի որոշման դեմ առարկություն ներկայացրել է ոչ միայն դիմումատուն, այլ նաև մեղադրանքը պաշտպանող դատախազը, ինչը սակայն անտեսվել է դատարանների կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ դրույթի և քրեական գործի քննության շրջանակներում կայացվելիք մեղադրական ակտի ներքին կապը՝ այդ ակտով հաստատված սուտ ցուցմունքը դիտարկելով որպես դատական ակտի վերանայման նախապայման և հիմք:

Կարծում ենք՝ դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի խնդրո առարկա դրույթի նեղ մեկնաբանությունը արժեզրկել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման կոնկրետ հիմքը (տվյալ դեպքում՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքը):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **01.07.1998թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը ՀՀ սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:**

Համակարգող՝ ***Ա. Ասատրյան***